ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՀԵ ԼԵՎՈՆԻ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՍԹԱՐԹԱՓ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ»-Ի ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԻՋՈՑ

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում:

**Գիտական ղեկավար՝** Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
**Վիլեն Վիկտորի Խաչատրյան**

**Պաշտոնական ընդիմախոսներ՝** Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Աշոտ Խաչատուրի Մարկոսյան**

Տնտեսագիտության թեկնածու
**Սոս Վիրաբի Խաչիկյան**

**Առաջատար կազմակերպություն՝** **ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի հուլիսի 26-ին, ժամը 14$^{00}$-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության 008 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հ. Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի հունիսի 16-ին:

**008 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝** **տ.գ.թ., դոցենտ Ի. Բ. Պետրոսյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** «Սթարթափ» և «սթարթափ էկոհամակարգ» հասկացությունները համեմատաբար վերջերս շրջանառության մեջ մտած հասկացություններ են, որոնց վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները գնալով շատանում են ու դառնում պահանջված: Հատկապես Հայաստանում թեմային առնչվող գիտական հետազոտությունները գրեթե բացակայում են, քանի որ Հայաստանի սթարթափ էկոհամակարգը դեռևս երիտասարդ է, և այնտեղ գործող սթարթափների գերակշիռ մասը գտնվում է կյանքի վաղ փուլում:

Պետության տնտեսությունը կայուն զարգացնելու ու ստեղծվող արտադրանքների և ծառայությունների՝ համաշխարհային շուկայում մրցունակ դարձնելու մեջ շատ կարևոր դեր է խաղում նորարարության զարգացումը: Նորարարությունը ձեռնարկություններին հնարավորություն է տալիս մեծացնել եկամուտների ծավալները, մրցակիցներից առաջ անցնել և մուտք գործել նոր շուկաներ, ինչն էլ, իր հերթին, բարձրացնում է պետության հեղինակությունը և մեծացնում պետության եկամուտները: Իսկ նորարարության զարգացման մեջ շատ կարևոր դեր են խաղում սթարթափները, որոնք ի տարբերություն ավանդական ձեռնարկությունների, նպատակ ունեն ստեղծելու ձեռնարկատիրական այնպիսի մոդել, որը արդիական կլինի համաշխարհային շուկայում, և հնարավորություն կտա նրանց արագ զարգանալ ու իրենց ստեղծած արտադրանքով կամ ծառայությամբ արագորեն մտնել աշխարհի տարբեր շուկաներ:

Բացի այդ, սթարթափները հանդիսանում են շուկայում նոր աշխատատեղերի ստեղծման աղբյուր, և նրանց հաջող զարգացման պարագայում նոր ստեղծվող աշխատատեղերի թիվը կարող է շատ ավելի արագ տեմպերով աճել, քան ավանդական ձեռնարկությունների պարագայում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ սթարթափները նորովի են մոտենում առկա հիմնախնդիրներին ու նպատակ ունեն լուծել դրանք՝ ստեղծելով այնպիսի արտադրանք կամ ծառայություն, որը համաշխարհային շուկայում կարող է դեռևս գոյություն չունենալ՝ այդպիսով շատ արագ մեծացնելով իրենց արտադրանքի կամ ծառայության նկատմամբ եղած պահանջարկը, ինչն էլ, իր հերթին, ենթադրում է նոր աշխատատեղերի ստեղծում: Մինչդեռ ավանդական ձեռնարկությունները հիմնականում գործում են ձեռնարկատիրական այնպիսի մոդելով, որը հեշտ է կրկնօրինակել, ինչը նրանց կողմից շուկային առաջարկվող արտադրանքը կամ ծառայությունը դարձնում են պակաս մրցունակ, որի հետևանքով նրանց զարգացումը կարող է դանդաղ լինել:

Ի վերջո, քանի որ Հայաստանը փոքր երկիր է և օգտակար հանածոներով այդքան հարուստ չէ, ուստի երկրի տնտեսությունը զարգացնելու և

համաշխարհային շուկայում մրցունակ արտադրանք կամ ծառայություն ստեղծելու համար այն հիմնականում կարող է հույսը դնել իր քաղաքացիների նորարար մտքերի ու գաղափարների վրա: Այս համատեքստում կարևոր դեր են խաղում սթարթափները, որոնք փորձում են նորարար լուծումներ տալ աշխարհում առկա հիմնախնդիրներին: Իսկ Հայաստանը արդեն ցույց է տվել, որ մեծ ներուժ ունի իր տարածքում ստեղծելու հաջողակ սթարթափներ, որոնք մրցունակ են համաշխարհային շուկայում: Այդ պատճառով Հայաստանի համար առանձնակի կարևորություն ունի իր սթարթափ էկոհամակարգի զարգացումը, որը կարող է հանդիսանալ տնտեսության երկարաժամկետ զարգացման միջոց:

Ուստի, Հայաստանի սթարթափ էկոհամակարգի արդյունավետ զարգացումը պետության համար դառնում է առաջնահերթություն, հատկապես նաև տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մեծածավալ ներդրումների ներգրավման համատեքստում: Հենց այս հանգամանքներով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է բացահայտել ու կատարելագործել այն կառուցակարգերը, որոնք կօգնեն զարգացնել Հայաստանի սթարթափ էկոհամակարգը, որն էլ, իր հերթին, կհանդիսանա Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մեծածավալ ներդրումների ներգրավման միջոց: Այս նպատակը իրագործելու համար հետազոտությունում առաջադրվել ու լուծվել են հետևյալ խնդիրները՝

1. Սահմանել «սթարթափ» ու «սթարթափ էկոհամակարգ» հասկացությունները գիտական և գործնական տարբեր նյութերի հետազոտության միջոցով:
2. Ուսումնասիրել սթարթափ էկոհամակարգում գործող տարբեր սուբյեկտների դերը ու նշանակությունը՝ օգտագործելով միջազգային փորձից ստացված տվյալները:
3. Բացահայտել սթարթափների կողմից ներդրումների ներգրավման հիմնական աղբյուրները ու կառուցակարգերը:
4. Վերլուծել սթարթափ էկոհամակարգի զարգացման միջազգային առաջավոր փորձը՝ ուսումնասիրելով գործողությունների այն համախումբը, որոնք նպաստել են այդ զարգացմանը, և բացահայտել Հայաստանում այդ փորձի տեղայնացման հնարավորությունները:
5. Վերլուծել Հայաստանի սթարթափ էկոհամակարգի վրա ազդող գործոնները և ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտը՝ առկա հնարավորություններն ու խոչընդոտները բացահայտելու համար:
6. Գնահատել Հայաստանի սթարթափ էկոհամակարգի արձանագրած արդյունքներն ու ցուցանիշները՝ դրա ուժեղ ու թույլ կողմերը հայտնաբերելու համար:

7.Գնահատել պետության կողմից իրականացվող սթարթափների հիմնադրման ու սթարթափներում ներդրումների խթանման քաղաքականությունների համեմատական ազդեցությունը սթարթափ էկոհամակարգի վրա՝ առավել արդյունավետ քաղաքականությունը բացահայտելու համար, և դրա հիման վրա առաջարկել գործողություններ, որոնք Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մեծաքանակ ներդրումների ներգրավման հիմք կհանդիսանան:

**Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:** Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի սթարթափ էկոհամակարգն է՝ իր տարբեր դերակատարներով ու բաղադրիչներով, իսկ հետազոտության առարկան՝ Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացումը, դրա ճիշտ կառավարումը խթանող քաղաքականության մշակումը, որը կօգնի Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մեծածավալ ներդրումների ներգրավմանը:

**Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:** Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել թեմային վերաբերող արտասահմանյան հեղինակների գիտական աշխատություններն ու գրքերը և միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված զեկույցները, ՀՀ բարձր տեխնոլոգիաների նախարարության կողմից հավաքագրվող պաշտոնական տվյալները, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի՝ ոլորտը ուսումնասիրող հետազոտությունները, միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, «StartupBlink», «Crunchbase», «Dealroom.co» և այլն) կողմից հրապարակված զեկույցներն ու տվյալների բազաները, ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենքներն ու ՀՀ կառավարության որոշումները և այլ մասնագիտական հրապարակումները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական վերլուծության, վիճակագրական, գրաֆիկական վերլուծության, հնարավորությունների ու խոչընդոտների բացահայտման, ուժեղ և թույլ կողմերի հայտնաբերման, ինչպես նաև՝ տնտեսագիտական ու մաթեմատիկական մոդելավորման մեթոդները:

**Հետազոտության գիտական արդյունքները և նորույթը:** Հետազոտության շրջանակներում բացահայտվել է Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացվածության մակարդակը, դրա ուժեղ ու թույլ կողմերը, ինչպես նաև՝ առկա հնարավորություններն ու խոչընդոտները: Բացի այդ, վենչուրային կապիտալի շուկայի մոդելի հիման վրա մշակվել է Հայաստանի սթարթափ էկոհամակարգի արդյունավետ զարգացման քաղաքականությունը: Արդյունքում, իրականացված վերլուծությունների հիման վրա ստացվել են

տեսական և կիրառական բովանդակության գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ հանդիսացողները ներկայացված են ստորև.

1. Հայաստանի սթարթափ էկոհամակարգի ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի համալիր վերլուծության հիման վրա բացահայտվել են ոլորտի զարգացման հնարավորություններն ու խոչընդոտները՝ ներկայացնելով օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ հայկական սթարթափների կողմից տեղական ու արտասահմանյան ներդրողներից ներդրումների ներգրավման համար:
2. Գնահատվել են Հայաստանի սթարթափ էկոհամակարգի տարբեր դերակատարների արձանագրած արդյունքներն ու ցուցանիշները, որի հիման վրա բացահայտվել են էկոհամակարգի ուժեղ ու թույլ կողմերը՝ նախանշելով ուժեղ կողմերի ամրապնդման և թույլ կողմերի չեզոքացման մոտեցումները:
3. Մշակվել է Հայաստանի վենչուրային կապիտալի շուկայի մոդելի վրա սթարթափների ստեղծման (վենչուրային կապիտալի պահանջարկի) ու սթարթափներում ներդրումների (վենչուրային կապիտալի առաջարկի) խթանման քաղաքականությունների ազդեցությունը, որի արդյունքում հիմնավորվել է Հայաստանի սթարթափ էկոհամակարգի երկարաժամկետ զարգացման համար առավել օպտիմալ քաղաքականությունը, և արվել են էկոհամակարգի զարգացմանն ուղղված գործնական առաջարկություններ:
4. Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրության հիման վրա վերլուծվել են տարբեր երկրների սթարթափ էկոհամակարգերի զարգացման առաջընթացն ապահոված գործողությունները՝ առաջարկելով դրանց տեղայնացման մոտեցումները Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացման գործողությունների փաթեթի համատեքստում:

**Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը և օգտագործումը**: Պետության կողմից վերջին մի քանի տարիներին առանձնակի ուշադրության են արժանանում սթարթափները, իսկ տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտը երկար տարիներ է, ինչ ճանաչված է որպես տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը: Ուստի, հետազոտության շրջանակներում իրականացված վերլուծությունները, ինչպես նաև՝ գիտական արդյունքերն ու առաջարկությունները կարող են օգնել պետությանը սթարթափ էկոհամակարգի զարգացման արդյունավետ քաղաքականության մշակման ու կատարելագործման համար:

Մյուս կողմից, հետազոտության արդյունքները կարող են հետաքրքրել սթարթափ էկոհամակարգի մյուս սուբյեկտներին՝ սթարթափների

հիմնադիրներին, սթարթափ աքսելերատորներին ու ինկուբատորներին, վենչուրային կապիտալի ֆոնդերին, «հրեշտակ» ներդրողներին, ինչպես նաև՝ տվյալ թեմայով ուսումնասիրություն իրականացնող հետազոտողներին և այլ անձանց ու կազմակերպություններին:

**Ատենախոսությունների արդյունքների փորձարկումը և հրապարակումները**: Հետազոտության գիտական արդյունքները քննարկվել են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնի նիստի ընթացքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված 5 և հեղինակի համահեղինակությամբ հրապարակված 2 գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև՝ հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 168 էջի վրա՝ առանց հավելվածների, և ընդգրկում է 25 աղյուսակ, 14 գծապատկեր ու 4 հավելված:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հետազոտության գիտական արդյունքները և նորույթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև դրանց փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության թեմայի **առաջին՝ «Սթարթափ էկոհամակարգի ձևավորման տեսական և մեթոդաբանական հիմքերը»** գլխում ներկայացվել են «սթարթափ» և «սթարթափ էկոհամակարգ» հասկացությունների վերաբերյալ առանձին հեղինակների բնորոշումները, սթարթափների տեսակները և կյանքի փուլերը, սթարթափ էկոհամակարգի հիմնական սուբյեկտները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սթարթափների կայուն զարգացման համար կարևոր դեր է խաղում նրանց կողմից ներդրումների ներգրավումը, ուստի առաջին գլխում անդրադարձ է կատարվել նաև սթարթափների ֆինանսավորման և դրամական միջոցների ներգրավման կառուցակարգերին: Այս համատեքստում քննարկվել են սթարթափների կյանքի յուրաքանչյուր փուլի համար անհրաժեշտ ներդրումների տեսակը և աղբյուրները, ինչպես նաև՝ ֆինանսավորման փուլերը:

Առաջին գլխում ուսումնասիրությունը եզրափակվել է սթարթափ էկոհամակարգի զարգացման միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությամբ, որի շրջանակներում քննարկվել են ԱՄՆ-ում, Իսրայելում, Ֆրանսիայում, Էստոնիայում և Բելառուսում իրականացված այնպիսի գործողությունները, որոնք նպաստել են իրենց սթարթափ էկոհամակարգերի զարգացմանը:

Ատենախոսության թեմայի **երկրորդ՝ «Սթարթափ էկոհամակարգի հիմնախնդիրների վերլուծությունը ՀՀ-ում»** գլխում գնահատվել են ՀՀ սթարթափ էկոհամակարգի վրա ազդող գործոնները, ինչպես նաև՝ իրականացվել է ՀՀ սթարթաթ էկոհամակարգի ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի և հիմնական ցուցանիշների վերլուծություն:

Սթարթափ էկոհամակարգի զարգացման վրա ազդող ամենակարևոր գործոնը տնտեսական այն համակարգը կամ միությունն է, որում գործում է տվյալ երկիրը: Հայաստանը մաս է կազմում Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ), որի մյուս անդամներն են Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը և Ղրղզստանը[1]: ԵԱՏՄ-ն 2020 թվականի դրությամբ ընդհանուր առմամբ իրենից ներկայացնում է 180.68 միլիոն բնակչությամբ միասնական շուկա, որի ահռելի մեծամասնությունը՝ մոտ 81%-ը, բաժին է հասնում Ռուսաստանին[2]: Սա, իհարկե, մեծ հնարավորություններ է բացում Հայաստանի սթարթափ էկոհամակարգի և ընդհանրապես ՏՀՏ ոլորտի համար, մասնավորապես՝ սահմանելով ապրանքների, ծառայությունների, կապիտալի, ու որ ամենակարևորն է, մարդկանց, այսինքն՝ աշխատուժի ազատ տեղաշարժի կարգավորումներ, ինչը հնարավորություն է տալիս Հայաստանում գործող սթարթափներին հեշտությամբ իրենց արտադրանքը ներկայացնել այդ շուկայում և մասնագետներ ներգրավել իրենց սթարթափներում: Հայաստանը նաև սերտ հարաբերություններ ունի Եվրոպական Միության հետ, որը իրենից ներկայացնում է 445.26 միլիոն բնակչությամբ շուկա 2020 թվականի դրությամբ[3]: Մասնավորապես՝ պետք է ընդգծել «Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԸԳՀ)»-ը՝ կնքված 2017 թվականի նոյեմբերի 24-ին և 2021 թվականի մարտի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտած, որը բացի այլ ոլորտներից սահմանում է նաև տնտեսական ոլորտի հնարավորություններ Հայաստանի համար[4]:

---

[1] http://www.eaeunion.org/?lang=en#about-countries [վերջին մուտք՝ 04.03.2022թ.]:

[2] Ցուցանիշը ստացվել է https://www.worldometers.info/world-population/population-by-country/ կայքի տվյալների հիման վրա [վերջին մուտք՝ 04.03.2022թ.]:

[3] Ցուցանիշը ստացվել է https://www.worldometers.info/world-population/population-by-country/ կայքի տվյալների հիման վրա [վերջին մուտք՝ 04.03.2022թ.]:

[4] https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_21_782 [վերջին մուտք՝ 06.03.2022թ.]:

Հայաստանի ՏՀՏ ոլորտի ու սթարթափ էկոհամակարգի վրա ազդող մյուս կարևորագույն գործոնը կրթական ոլորտն է: Վերջին տարիներին ՏՀՏ ոլորտի մասնագիտացումներով ֆակուլտետները ավարտածների թիվը ցածր մակարդակի վրա է ինչպես բակալավրի, այնպես էլ մագիստրատուրայի համար:

**Աղյուսակ 1**[5]

**2016 թվականից մինչև 2020 թվականը բակալավրի՝ ՏՀՏ ոլորտի մասնագիտացումներով ֆակուլտետները ավարտածների թիվն ու նրանց մասնաբաժինը ընդհանուր ավարտածների թվի մեջ**

| Տարի | ՏՀՏ ֆակուլտետները ավարտածների թիվը | ՏՀՏ ֆակուլտետները ավարտածների մասնաբաժինը ընդհանուր ավարտածների մեջ |
|---|---|---|
| 2016 | 898 | 4.7% |
| 2017 | 649 | 3.6% |
| 2018 | 1,039 | 6.7% |
| 2019 | 902 | 5.7% |
| 2020 | 918 | 5.9% |

[5] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2017, էջ 214-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2017 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018, էջ 215-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2019, էջ 220-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2019 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2020, էջ 217-ի և «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2020 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021, էջ 212-ի տվյալներից:

**Աղյուսակ 2**[6]

**2016 թվականից մինչև 2020 թվականը մագիստրատուրայի՝ ՏՀՏ ոլորտի մասնագիտացումներով ֆակուլտետները ավարտածների թիվն ու նրանց մասնաբաժինը ընդհանուր ավարտածների թվի մեջ**

| Տարի | ՏՀՏ ֆակուլտետները վարտածների թիվը | ՏՀՏ ֆակուլտետները ավարտածների մասնաբաժինը ընդհանուր ավարտածների մեջ |
|---|---|---|
| 2016 | 204 | 3.1% |
| 2017 | 110 | 2.4% |
| 2018 | 276 | 5% |
| 2019 | 204 | 4.2% |
| 2020 | 192 | 4.2% |

Եթե համեմատենք այս թվերը նույն ժամանակահատվածում ՏՀՏ ոլորտում աշխատողների թվի հետ, ապա կհասկանանք, որ ավարտողների թիվը անհամեմատ ավելի ցածր է քան աշխատանքի նոր ընդունվողների թիվը:

**Աղյուսակ 3**[7]

**ՏՀՏ ոլորտի աշխատողների թիվը 2016 թվականից մինչև 2020 թվականը**

| Տարի | ՏՀՏ ոլորտի աշխատողների թիվը |
|---|---|
| 2016 | 14,118 |
| 2017 | 15,095 |
| 2018 | 16,170 |
| 2019 | 17,493 |
| 2020 | 19,827 |

Բացի ՏՀՏ ոլորտի մասնագետների քանակական պակասից նկատվում է նաև որակական պակաս, քանի որ բարձրագույն ուսումնական հաստատությունները ավարտած ուսանողները հաճախ չեն ունենում շուկայի

[6] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2017, էջ 241-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2017 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2018, էջ 242-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2019, էջ 247-ի, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2019 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2020, էջ 252-ի և «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2020 թվականին», ՀՀ վիճակագրական կոմիտե, 2021, էջ 247-ի տվյալներից:

[7] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ելնելով ՀՀ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալներից:

պահանջներին բավարարող գիտելիքներ ու հմտություններ: Դա մեծապես գալիս է նրանից, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատող պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձերը գտնվում են ցածր մակարդակի վրա, ինչը խոչընդոտում է շուկայի լավ մասնագետներին ներգրավելու հնարավորությանը, որոնք կարող են իրականացնել որակյալ ու արդիական դասավանդում և իրենց հարուստ փորձը կիսել ուսանողների հետ[8]:

Ինչ վերաբերում է օրենսդրական դաշտին, ապա պետությունը հիմնականում որդեգրել է հայկական սթարթափներին ու ՏՀՏ ձեռնարկություններին հարկային արտոնություններ տրամադրելու քաղաքականությունը: Մասնավորապես՝ ««Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որը ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին, և որի բոլոր հոդվածները, բացառությամբ 7-րդի (որը ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարի 1-ից), ուժի մեջ են մտել 2015 թվականի հունվարի 9-ից[9], սահմանում է, որ 30-ից ոչ ավել աշխատող ունեցող ՏՏ ձեռնարկություններն ու սթարթափները վճարեն 0% շահութահարկ[10] և 10% եկամտային հարկ[11]: Այս արտոնությունների տրամադրման շնորհիվ ՏՀՏ ձեռնարկությունների թիվը 2015 թվականից զգալիորեն աճել է, ինչը երևում է ստորև ներկայացված աղյուսակում:

**Աղյուսակ 4[12]**

**ՏՀՏ ոլորտի ձեռնարկությունների թիվը 2009 թվականից մինչև 2021 թվականը**

| Տարի | ՏՀՏ ձեռնարկությունների քանակ | Հավելաճի տեմպ |
|---|---|---|
| 2009 | 649 | - |
| 2010 | 685 | 5.55% |
| 2011 | 698 | 1.90% |
| 2012 | 695 | -0.43% |
| 2013 | 696 | 0.14% |
| 2014 | 700 | 0.57% |
| 2015 | 815 | 16.43% |
| 2016 | 908 | 11.41% |

[8] «ՏՀՏ ոլորտը Հայաստանում 2018», «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ, 2019, էջ 32:

[9] «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-245-Ն, ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1 Հոդ.1253.34, հոդված 18:

[10] «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-155, ՀՀՊՏ 1997.12.03/27, հոդված 8 և հոդված 11:

[11] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-246-Ն, ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1 Հոդ.1634.20, հոդված 10:

[12] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ելնելով ՀՀ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալներից:

**ՏՀՏ ոլորտի ձեռնարկությունների թիվը 2009 թվականից մինչև 2021 թվականը (շարունակություն)**

| Տարի | ՏՀՏ ձեռնարկությունների քանակ | Հավելաճի տեմպ |
|---|---|---|
| 2017 | 1090 | 20.04% |
| 2018 | 1728 | 58.53% |
| 2019 | 1599 | -7.47% |
| 2020 | 1751 | 9.51% |
| 2021 | 1777 | 1.48% |

ՏՀՏ ոլորտի օրենսդրական դաշտի վերլուծության համատեքստում հարկ է նաև նշել ՀՀ կառավարության կողմից վերջերս՝ 2022 թվականի մարտի 24-ին ընդունված N 399-Լ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշումը, որը ուժի մեջ է մտել 2022 թվականի մարտի 26-ին[13]: Այս որոշմամբ սահմանվում է, որ պետական աջակցություն է տրամադրվում ՏՀՏ ոլորտում գործող այն ձեռնարկություններին և անհատ ձեռնարկատերերին, որոնց աշխատողների թվաքանակը ավելացել է առնվազն 50-ով 2022 թվականի մարտի 1-ի դրությամբ համապատասխան ձեռնարկության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ գրանցված աշխատողների թվաքանակի համեմատ[14]: Ընդ որում, նոր գրանցված առնվազն 50 աշխատողներից յուրաքանչյուրը չպետք է լինի Հայաստանում գրանցված աշխատող 2022 թվականի մարտ ամսվան նախորդած 6 ամիսների ընթացքում[15]: Այս չափանիշներին բավարարող ՏՀՏ ձեռնարկություններին ու անհատ ձեռնարկատերերին տրամադրվող պետական աջակցությունը կայանում է համապատասխան նոր գրանցված աշխատողների եկամուտներից վճարված եկամտային հարկի 50%-ի փոխհատուցումը: Եկամտային հարկի այս հետվերադարձը ՏՀՏ ձեռնարկությունը կամ անհատ ձեռնարկատերը կարող է

[13] «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 399-Լ, 2022, հոդված 2:

[14] «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 399-Լ, 2022, Հավելված, կետ 3, ենթակետ 2:

[15] «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 399-Լ, 2022, Հավելված, կետ 3, ենթակետ 3:

ստանալ մարտ ամսվա և դրան հաջորդող 11 ամիսների համար, քանի դեռ յուրաքանչյուր ամիս բավարարում է նշված պայմաններին[16]:

Մյուս կարևոր նախաձեռնությունը, որը նպատակ ունի զարգացնելու Հայաստանի սթարթափ էկոհամակարգը, ամրագրված է 2020 թվականի մարտի 12-ին ընդունված ««Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ: Այն բաղկացած է չորս բաղադրիչներից՝

1. «Հայաստան – Սիլիկոնյան Հովիտ» բաղադրիչը, որի շրջանակներում նախատեսվում է ստեղծել Հայկական տեխնոլոգիական կենտրոն ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Սան Հոզե քաղաքում և հնարավորություն ընձեռել տարեկան 45 ձեռնարկատերերի անցնելու վերապատրաստման դասընթացներ, ներկայացնելու իրենց գաղափարներն ու արտադրանքը տեղական ներդրողներին ու վենչուրային կապիտալի մասնագետներին:

2. «Հայաստան – տարածաշրջանային տեխնոլոգիական հաբ» բաղադրիչը, որի հիմնական նպատակն է խթանել Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների տեխնոլոգիական ընկերությունների մասնաճյուղերի հիմնումը Հայաստանում: Այս բաղադրիչի շրջանակներում նախատեսված է բարենպաստ պայմաններ ստեղծել այդ տարածաշրջանի սթարթափների համար, որպեսզի նրանք Հայաստան տեղափոխվեն և իրենց գործունեությունը շարունակեն Հայաստանում:

3. «Հայաստան – Ծոցի երկրներ համագործակցություն» բաղադրիչը, որն իրենից ներկայացնում է, մի կողմից, Արաբական Միացյալ Էմիրություններում «Հայկական անկյուն» ստեղծելը և այդտեղ 2 ամիս տևողությամբ սթարթափ աքսելերացիոն ծրագրերի իրականացումը հայկական սթարթափների համար, հայկական սթարթափների մասնակցությունը «Dubai Future» հիմնադրամի կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումներին, ինչպես նաև՝ «Area 2071» ծրագրի շրջանակներում հայկական տարածքի ձեռքբերումը, և մյուս կողմից՝ Քաթարի կողմից երեք հիմնական սթարթափ ինկուբատորներում հայկական սթարթափների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

4. «Ներուժ» սփյուռքահայերի սթարթափների ծրագիր բաղադրիչը, որի հիմնական նպատակն է սփյուռքահայ ձեռնարկատերերի հայրենադարձումը և ձեռնարկատիրական իրենց գործունեության շարունակումը Հայաստանում:

Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ օրենսդրությամբ մի շարք կարևոր հարցեր չեն կարգավորվում, ինչը ստիպում է Հայաստանի ձեռնարկատերերին արտասահմանում գրանցել իրենց սթարթափը, մասնավորապես՝ ԱՄՆ-ում: Դա գալիս է նրանից, որ ԱՄՆ-ում ներդրողները

---

[16] «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 399-Լ, 2022, Հավելված, կետ 7:

կյանքի վաղ փուլում գտնվող սթարթափներում ներդրումները իրականացնում են «ապագայում սեփական կապիտալի բաժնեմաս ստանալու համար պարզեցված պայմանագիր» (անգլերեն՝ «Simple Agreement for Future Equity») կնքելու միջոցով, որը, օրինակ՝ ԱՄՆ-ի օրենսդրությամբ կարգավորվում է, իսկ Հայաստանի օրենսդրությունը անգամ սահմանած չունի, թե դա իրենից ինչ է ներկայացնում:

Ատենախոսության մեջ Հայաստանի սթարթափ էկոհամակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ բացի 4 սթարթափներից, մնացած բոլորի արժողությունը չի անցնում 100 միլիոն ԱՄՆ դոլարը, ինչը նշանակում է, որ Հայաստանի սթարթափ էկոհամակարգը դեռ երիտասարդ է, իսկ այնտեղ գործող սթարթափները գտնվում են կյանքի դեռևս վաղ փուլում և ներգրավում են հիմնականում նախասաղմնային կամ սաղմնային շրջանի ներդրումներ: Հայաստանի սթարթափ էկոհամակարգի մյուս դերակատարները՝ սթարթափ աքսելերատորներն ու ինկուբատորները, վենչուրային կապիտալի ֆոնդերը, «հրեշտակ» ներդրողների ցանցերը իրենց հերթին հենց կենտրոնացած են կյանքի վաղ փուլում գտնվող սթարթափների զարգացման վրա, ինչը համապատասխանում է էկոհամակարգի պահանջներին: Սակայն Հայաստանի սթարթափ էկոհամակարգը հիմնականում չի մասնակցում կյանքի հասուն փուլում գտնվող սթարթափների զարգացմանը, որը շատ կարևոր գործոն է «միաեղջյուրներ» ստեղծելու համար, ինչը ավելի հեղինակավոր կդարձնի էկոհամակարգը և ավելի կհեշտացնի էկոհամակարգի սթարթափների համար արտասահմանյան ներդրողներից ներդրումների ներգրավումը:

**Ատենախոսության թեմայի երրորդ՝ «Սթարթափ էկոհամակարգի կատարելագործման և ֆինանսավորման կառուցակարգերի ներդրման մոտեցումները ՀՀ-ում»** գլխում մշակվել է Հայաստանի վենչուրային կապիտալի շուկայի մոդելը և պետության կողմից իրականացվող հնարավոր երկու քաղաքականությունների ազդեցությունը շուկայի ու սթարթափ էկոհամակարգի վրա: Այնուհետև իրականացվել է Հայաստանի սթարթափ էկոհամակարգի կատարելագործման և միջազգային առաջավոր փորձի տեղայնացման հնարավորությունների վերլուծությունը:

Հայաստանի վենչուրային կապիտալի շուկայի մոդելի մշակման համատեքստում դիտարկվել է Հայաստանի վենչուրային կապիտալի առաջարկի ու պահանջարկի կախվածությունը սթարթափների կողմից ներդրողներին տրվող բաժնեմասի նկատմամբ («**s**» փոփոխական), որը կարող է ընդունել 0-ից 1 արժեքը: 0-ն նշանակում է, որ ներդրողները իրենց կատարված ներդրումների դիմաց սթարթափի որևէ բաժնեմաս չեն ստանում, իսկ 1-ը, որ ստանում են ամբողջ բաժնեմասը: Ուստի, վենչուրային կապիտալի պահանջարկը ցույց է տալիս սթարթափների կողմից պահանջվող ներդրումների ծավալը յուրաքանչյուր սահմանված բաժնեմասի մակարդակի դեպքում և դառնում է 0, երբ բաժնեմասը

հավասարվում է 1-ի և գնալով աճում՝ բաժնեմասի նվազմանը զուգահեռ: Սա դարձնում է Հայաստանի վենչուրային կապիտալի պահանջարկի կորը դեպի ներքև ու աջ ընթացող: Իսկ վենչուրային կապիտալի առաջարկը ցույց է տալիս շուկայում ներդրողների կողմից առաջարկվող ներդրումների ծավալը յուրաքանչյուր սահմանված բաժնեմասի մակարդակի դեպքում և դառնում է 0, երբ բաժնեմասը հավասարվում է 0-ի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի սթարթափ էկոհամակարգը դեռևս երիտասարդ է, որ ունենա իր սթարթափ էկոհամակարգում հաջողություն գրանցած ձեռնարկատերեր, որոնք դարձել են «հրեշտակ» ներդրողներ, ուստի Հայաստանի վենչուրային կապիտալի առաջարկի ներկայացուցիչներն են արտաքին ներդրողները, այսինքն՝ վենչուրային կապիտալի ֆոնդերը և այն «հրեշտակ» ներդրողները, որոնք իրենց հարստությունը կուտակել են Հայաստանի սթարթափ էկոհամակարգից դուրս իրականացրած ձեռնարակատիրական գործունեության արդյունքում: Սա դարձնում է Հայաստանի վենչուրային կապիտալի առաջարկի կորը դեպի վերև և աջ ընթացող, քանի որ բաժնեմասի մակարդակի աճին զուգահեռ աճում է նաև արտաքին ներդրողների կողմից առաջարկվող ներդրումների ծավալը: Ստորև կազմված գծապատկերի ուղղահայաց առանցքում ներկայացված է սթարթափի՝ ներդրողներին տրվող բաժնեմասի մակարդակը ներգրավված ներդրումների դիմաց, իսկ հորիզոնական առանցքում՝ պահանջվող կամ առաջարկվող ներդրումների ծավալը: Պահանջարկի և առաջարկի կորերի հատման կետում էլ հաստատվում է ներդրումների հավասարակշռված ծավալը և բաժնեմասի հավասարակշռված մակարդակը, որը օպտիմալ է վենչուրային կապիտալի շուկայի ու սթարթափ էկոհամակարգի համար: Հավասարակշռման այս կետում սթարթափների հիմնադիրներից յուրաքանչյուրի ունեցած ընդհանուր օգտակարությունը ունենում է հետևյալ տեսքը՝

$$U_E = (1-s)\times p - C_E$$

«p» փոփոխականը իրենից ներկայացնում է այն շահույթը, որը սթարթափը ստեղծում է հաջողության հասնելու պարագայում, ուստի «(1-s)×p»-ն ցույց է տալիս սթարթափի գործունեության արդյունքում հիմնադիրների ստացած եկամուտները, իսկ «$C_E$»-ն՝ կատարված ծախսերը: Ձեռնարկատերերը միտված են նոր սթարթափներ հիմնել այնքան ժամանակ քանի դեռ «$U_E$»-ն մեծ է 0-ից:




**Գծապատկեր 1. Հայաստանի վենչուրային կապիտալի առաջարկը և պահանջարկը**[17]

Պետությունը կարող է իրականացնել երկու հնարավոր քաղաքականություն՝ խթանելու ներդրումների ծավալի աճը հավասարակշռման կետում: Դրանցից առաջինը նոր սթարթափների ստեղծումը խթանող քաղաքականությունն է, որի շրջանակներում պետությունը հարկային արտոնություններ է տրամադրում կյանքի վաղ փուլում գտնվող սթարթափներին: Հենց այս քաղաքականությունն է որդեգրել Հայաստանը վերջին տարիներին: Այս համատեքստում պետությունը նվազեցրել է սթարթափների հարկային ծախսերը, ինչն իրենից ներկայացնում է սուբսիդավորում սթարթափների համար: Մատչելիության համար դիտարկվել է այն դեպքը, երբ պետությունը սուբսիդավորում է սթարթափների հարկային պարտավորությունների ծավալը «$Sub_E$» չափով, ինչը նվազեցնում է սթարթափների ծախսերը: Այս սուբսիդավորումը Հայաստանի վենչուրային կապիտալի պահանջարկի կորը դեպի վերև է տեղաշարժել, որի արդյունքում յուրաքանչյուր սահմանված բաժնեմասի մակարդակում ավելի մեծ է դարձել սթարթափների կողմից պահանջվող ներդրումների ծավալը, քանի որ այս քաղաքականությունը խթանել է էկոհամակարգ մուտք գործող սթարթափների թիվը: Ուստի Հայաստանի վենչուրային կապիտալի շուկան այս սուբսիդավորման պարագայում ունենում է հետևյալ տեսքը՝

[17] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:




**Գծապատկեր 2. Սթարթափների ստեղծման սուբսիդիայի ազդեցությունը Հայաստանի վենչուրային կապիտալի շուկայի վրա[18]**

Արդյունքում, հավասարակշռման նոր կետում հաստատվում է բաժնեմասի ավելի բարձր՝ «s*(SubE)» մակարդակ և ներդրումների ավելի բարձր «i*(SubE)» ծավալ: Իսկ սթարթափների հիմնադիրներից յուրաքանչյուրի օգտակարությունը դառնում է՝

$$U_E = (1-s^*(Sub_E))\times p - (C_E-Sub_E)$$

Կապիտալի գնի, այսինքն՝ արտաքին ներդրողներին տրվող բաժնեմասի մակարդակի այս մեծացումը սակայն բացասաբար է անդրադառնում յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ ունեցած ընդհանուր «UE» օգտակարության վրա «(s*(SubE)-s*)×p» չափով, որը փոխանցվում է ներդրողներին: Եթե «(s*(SubE)-s*)×p»-ն մեծ է «SubE»-ից, ապա հավասարակշռման նոր մակարդակի պայմաններում յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ ունեցած ընդհանուր «UE» օգտակարությունը նվազում է: Եթե «(s*(SubE)-s*)×p»-ն հավասար է «SubE»-ին, յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ ունեցած «UE»-ն մնում է նույնը, իսկ եթե «(s*(SubE)-s*)×p»-ն փոքր է «SubE»-ից, ապա «UE»-ն ավելանում է: Սակայն մեկ բան հստակ է, որ այս սուբսիդավորման դեպքում «UE»-ն նախատեսված սուբսիդավորման «SubE»-ի չափով չի ավելանում, իսկ որոշ դեպքերում կարող է անգամ նվազել:

[18] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

Մեկ այլ ազդեցություն տեղի կունենա Հայաստանի վենչուրային կապիտալի շուկայի վրա, երբ պետությունը որդեգրի վենչուրային կապիտալի շուկայի առաջարկի մեծացման քաղաքականությունը: Որպես վենչուրային կապիտալի շուկայի առաջարկի խթանման միջոց մեր ներկայացրած մոդելը դիտարկում է հարկային այն արտոնությունը, որը տրվում է արտաքին ներդրողներին՝ դրանով իսկ մեծացնելով համապատասխան «s» կապիտալի գնի պարագայում նրանց կողմից ներդրումներ իրականացնելու չափը: Մատչելիության համար դիտարկենք այն դեպքը, երբ պետությունը սուբսիդավորում է յուրաքանչյուր կատարված «im» ներդրման համար «$Sub_I$» չափով: Այս սուբսիդավորումը առաջարկի կորը դեպի ներքև է տեղաշարժում և հաստատվում է հավասարակշռման նոր կետ, որտեղ բաժնեմասի մակարդակը նվազում է՝ դառնալով «$s^*(Sub_I)$», իսկ ներդրումների ծավալը կրկին ավելանում է՝ դառնալով «$i^*(Sub_I)$»: Արդյունքում, Հայաստանի վենչուրային կապիտալի շուկան ունենում է հետևյալ տեսքը.




**Գծապատկեր 3. Ներդրումների սուբսիդիայի ազդեցությունը Հայաստանի վենչուրային կապիտալի շուկայի վրա**[19]

Իսկ սթարթափների հիմնադիրներից յուրաքանչյուրի ընդհանուր օգտակարության հավասարումը ունենում է հետևյալ տեսքը՝

[19] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

$$U_E = (1 - s^*(Sub_I)) \times p - C_E$$

Կապիտալի գնի այս նվազումը դրական է անդրադառնում յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ ունեցած ընդհանուր «$U_E$» օգտակարության վրա, քանի որ հավասարակշռման նոր մակարդակում կապիտալի գինը, այսինքն՝ արտաքին ներդրողների կողմից սթարթափներում ունեցած բաժնեմասը նվազում է, ինչը մեծացնում է յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ ընդհանուր օգտակարությունը «$(s^* - s^*(Sub_I)) \times p$» չափով: Կարևոր է նաև նշել, որ սթարթափների ստեղծման «$Sub_E$» սուբսիդիայի և ներդրումների «$Sub_I$» սուբսիդիայի միևնույն մակարդակների պարագայում ներդրումների ծավալը հավասարակշռման կետում միևնույն չափով է ավելանում, սակայն ձեռնարկատերերից յուրաքանչյուրի ընդհանուր «$U_E$» օգտակարությունը ավելի մեծ ծավալով է ավելանում ներդրումների սուբսիդիայի կիրառման դեպքում: Ուստի, կարող ենք փաստել, որ ներդրումների սուբսիդավորումը առավել օպտիմալ քաղաքականություն է հայկական սթարթափների համար, քանի որ այն մեծացնում է սթարթափների հիմնադիրների ընդհանուր օգտակարությունը ավելի մեծ ծավալով և հնարավորություն ստեղծում, որ այդ հիմնադիրները ապագայում դառնան «հրեշտակ» ներդրողներ, և իրենք ներդրումներ կատարեն նոր ստեղծվող սթարթափներում:

Ատենախոսության թեմայի երրորդ գլխում իրականացվել են նաև Հայաստանի սթարթափ էկոհամակարգի կատարելագործմանն ուղղված գործնական առաջարկություններ, որոնք նպատակ ունեն բարելավելու ՏՀՏ ոլորտի կրթական համակարգը և օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու «ապագայում սեփական կապիտալի բաժնեմաս ստանալու համար պարզեցված պայմանագիր»-ների վերաբերյալ: Բացի այդ, միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրության արդյունքում իրականացվել են նաև սթարթափ էկոհամակարգի զարգացման առանձին գործողությունների տեղայնացման հնարավորությունները Հայաստանում՝ օգտագործելով Իսրայելի, Ֆրանսիայի, Էստոնիայի, Բելառուսի և Հնդկաստանի օրինակները:

Հայաստանի սթարթափ էկոհամակարգի վերաբերյալ իրականացված հետազոտությունները հնարավորություն են տվել հանգամանալից ուսումնասիրել դրա զարգացվածության մակարդակը և առկա հիմնախնդիրները, ինչպես նաև՝ ուրվագծել դրա զարգացման հեռանկարները: Արդյունքում, ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում արվել են հետևյալ **եզրակացությունները**.

1. «Սթարթափ» հասկացությունը վերջերս շրջանառության մեջ մտած հասկացություն է, հատկապես՝ Հայաստանի համար, որի նկատմամբ հետաքրքրությունը տնտեսագիտական տեսանկյունից գնալով մեծանում է: Սթարթափներին հատուկ է ձեռնարկության կառավարման նոր մոտեցումների

կիրառումը, և նրանք նպատակ են հետապնդում գտնել ձեռնարկատիրական այնպիսի մոդել, որը ընդլայնման ու կրկնվելու ենթակա կլինի: Քանի որ սթարթափները գործում են նորարարության ոլորտում, որտեղ անորոշությունը մեծ է, ուստի նրանց հատուկ է առանձնակի բարձր ռիսկայնությունը, որի գնահատման համար առանձնացնում են սթարթափների կյանքի 3 հիմնական փուլեր՝ սաղմնային, վաղ և հասուն:

2. Սթարթափ էկոհամակարգը աշխարհագրական այն տարածաշրջանն է, որտեղ գործող անձինք, իրենց սթարթափները և տարբեր տեսակի օժանդակող կազմակերպությունները միասին իրենց ջանքերն են գործադրում այդ տարածաշրջանում նոր սթարթափներ հիմնելու և առկա սթարթափները զարգացնելու համար: Սթարթափ էկոհամակարգերը ընդունված է առանձնացնել՝ ըստ քաղաքների ու երկրների: Իսկ սթարթափ էկոհամակարգի 2 հիմնական դերակատարներն են առաջնորդները ու սնուցողները: Առաջնորդները այն ձեռնարկատերերն են, որոնք հիմնում են սթարթափները, իսկ սնուցողները նրանց զարգացումը օժանդակող մնացած բոլոր կառույցներն ու անհատներն են, ինչպես օրինակ՝ կառավարությունը, համալսարանները, ներդրողները, ծառայություն մատուցողները և ընկերությունները:

3. Իրենց կյանքի տարբեր փուլերում սթարթափները բախվում են տարբեր խնդիրների, սակայն դրանցից ամենագլխավորը արտաքին կառույցներից ներդրումների ներգրավումն է: Սթարթափների մեծամասնությունը իրենց կյանքի սաղմնային փուլում հիմնականում գործում է սթարթափների հիմնադիրների, նրանց ընկերների ու հարազատների ֆինանսական միջոցների հաշվին, որից հետո հաջողության հասնելու ու գործունեությունը շարունակելու համար սթարթափներին անհրաժեշտ է ներդրումներ ներգրավել արտաքին կառույցներից: Շատ սթարթափներ չեն կարողանում դա իրականացնել և թևակոխել կյանքի հաջորդ՝ վաղ փուլ: Այդ իսկ պատճառով այդ ժամանակահատվածը կոչվում է «մահվան հովիտ»: Իսկ այն սթարթափները, որոնք հաջողությամբ արտաքին ներդրումներ են կարողանում ներգրավել, գնալով ավելի են զարգանում: Սթարթափները արտաքին ներդրումներ կարող են ստանալ բազմաթիվ աղբյուրներից, ինչպես օրինակ՝ վենչուրային կապիտալի ֆոնդերից, «հրեշտակ» ներդրողներից, խմբային ֆինանսավորումից (քրաուդֆանդինգից), սթարթափ աքսելերատորներից ու ինկուբատորներից, սթարթափ մրցույթներում մրցանակային տեղ զբաղեցնելով, բանկերից, պետությունից ու ձեռնարկատիրական մեծ ընկերություններից: Սթարթափներում ներդրումներն իրականացվում են շրջանների տեսքով, որոնք հիմնականում լինում են նախասաղմնային, սաղմնային, հրեշտակային, վենչուրային, «A» շրջանի, «B» շրջանի, «C» շրջանի ու «C» շրջանից հետո:

4. Տարբեր երկրներ տարբեր կերպ են փորձում զարգացնել իրենց սթարթափ էկոհամակարգերը, բայց գրեթե բոլորը որոշակիորեն օրինակ են

վերցնում ամերիկյան Սիլիկոնյան Հովտի հաջողությունը: Մի մասը զարգացնում է կրթական ոլորտը՝ բավարարելու սթարթափների պահանջները աշխատուժի տեսանկյունից ու կրթելու նորարարության ոլորտի նոր ձեռնարկատերերին, տարբեր նախագծեր իրականացնում, որոնք միտված են տաղանդավոր աշխատողների մուտքը իրենց սթարթափ էկոհամակարգ հեշտացնելուն: Մյուս մասը զարգացնում է վենչուրային կապիտալի շուկան՝ մեծացնելով շուկայում հասանելի ներդրումների ծավալները: Իսկ որոշ դեպքերում էլ, ինչպես ԱՄՆ-ի օրինակում, զարգացնում են ձեռնարկատիրության մշակույթը:

5. Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը կայուն զարգացող ոլորտ է, որի ինչպես արտադրական, այնպես էլ արտահանման ծավալները տարեցտարի գնալով աճում են՝ յուրաքանչյուր տարի գրանցելով տարեկան աճի դրական տեմպ: Ավելանում է նաև ոլորտի ձեռնարկությունների թիվը, որի տարեկան աճի տեմպը վերջին տարիներին համեմատաբար ավելի բարձր ցուցանիշներ է արձանագրում, ինչը պայմանավորված է օրենքով նրանց տրվող հարկային արտոնություններով:

6. ՀՀ օրենսդրությունը երաշխիքներ է տրամադրում օտարերկրյա ներդրողներին օրենսդրության անբարենպաստ փոփոխություններից պաշտպանելու համար, որի շրջանակներում օտարերկրյա ներդրողները կատարված ներդրումների պահից մինչև 5 տարին կարող են օգտվել ներդրումների պահին եղած իրավակարգավորումներից: Բացի այդ, օտարերկրյա ներդրումները ենթակա չեն ազգայնացման կամ պետության կողմից բռնագրավման բացառությամբ, եթե կա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշում, որի պարագայում էլ բռնագրավված ներդրումների դիմաց օտարերկրյա ներդրողներին ապահովվում է կատարված իրենց ներդրումների լրիվ փոխհատուցում: Իսկ պետության կամ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից օրենքին հակասող գործողությունների հետևանքով պատճառված նյութական և բարոյական վնասների դեպքում օտարերկրյա ներդրողները դատարանի միջոցով կարող են փոխհատուցում ստանալ պետությունից, այդ թվում՝ բաց թողնված օգուտի մասով:

7. ՀՀ կառավարությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը զարգացնելու համար ձեռնարկել է օրենսդրական 3 հիմնական նախաձեռնություն: Դրանցից առաջինը կայանում է նոր հիմնվող կամ դեռևս փոքր ձեռնարկություններին շահութահարկի վճարումից ազատելը և դրանց համար եկամտային հարկի 10% դրույքաչափ սահմանելը, որի շնորհիվ գրանցված ձեռնարկությունների թիվը ոլորտում գնալով ավելի մեծ ծավալով է մեծացել: Երկրորդը թիրախավորում է հենց Հայաստանի սթարթափներին՝ նպատակ ունենալով կապեր հաստատել ԱՄՆ-ի, Քաթարի ու Արաբական Միացյալ Էմիրությունների սթարթափ էկոհամակարգերի հետ, Հայաստանը դարձնել տարածաշրջանի զարգացած տեխնոլոգիական հաբ, ինչպես նաև խթանել

սփյուռքում գտնվող հայ ձեռնարկատերերի հայրենադարձումը «Ներուժ» մրցույթի իրականացման միջոցով: Իսկ երրորդ նախաձեռնությունը, որը վերջերս է ընդունվել, կրում է ժամանակավոր բնույթ և նպատակ ունի խրախուսելու մեծաքանակ թվով աշխատողների համալրումը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող հայկական ձեռնարկություններում՝ նրանց տրամադրելով նոր ընդունված աշխատողների մասով վճարված եկամտային հարկի 50%-ի փոխհատուցում 2022 թվականի մարտ ամսվա և դրան հաջորդող 11 ամիսների համար:

8. Ներդրումների ներգրավման տեսանկյունից Հայաստանում զարգացած չէ արտասահմանում ավանդական դարձած «ապագայում սեփական կապիտալի բաժնեմաս ստանալու համար պարզեցված պայմանագիր»-ների կիրառումը (որոնք կիրառվում են, երբ դեռ սթարթափների արժողությունը որոշված չէ), քանի որ ՀՀ օրենսդրությունը որևէ կերպ չի սահմանում այդ պայմանագրերը և երաշխիքներ չի տրամադրում ներդրողներին սթարթափներում իրենց կատարված ներդրումների դիմաց ապագայում ստացվելիք բաժնեմասի գծով: Այդ իսկ պատճառով Հայաստանի շատ ձեռնարկատերեր իրենց սթարթափը գրանցում են արտերկրում, որը հնարավորություն է տալիս այդ պայմանագրերի կնքման միջոցով ներդրումներ ներգրավել, երբ դեռ սթարթափը գտնվում է կյանքի վաղ փուլում ու իր արժողությունը դեռ որոշված չէ:

9. Հայաստանում ձեռնարկություն հիմնելը բավականին հեշտ ու արագ գործընթաց է: Այս ցուցանիշով աշխարհի դասակարգման ցուցակում Հայաստանը զբաղեցնում է 10-րդ տեղը: Հայաստանը իրականացնում է նաև համեմատաբար մեղմ հարկային քաղաքականություն, որի շնորհիվ «հարկերի վճարում» ցուցանիշով Հայաստանը գտնվում է աշխարհում 52-րդ հորիզոնականում: Մինչդեռ Հայաստանում փոքրամասնություն հանդիսացող ներդրողների պաշտպանությունը այդքան էլ արդյունավետ չի իրականացվում, որի պատճառով Հայաստանը այդ ցուցանիշով աշխարհի դասակարգման ցուցակում զբաղեցնում է 120-րդ տեղը:

10. Հայաստանի կրթական ոլորտը չի ապահովում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մասնագետների աճող պահանջարկի բավարարում: Վերջին մի քանի տարիներին ՏՀՏ բակալավրի ֆակուլտետները ավարտածների թիվը ամեն տարվա համար չի անցել 1,039-ը՝ ունենալով նաև ցածր մասնաբաժին ընդհանուր ավարտածների մեջ: Նույն պատկերն է դրսևորվում նաև ՏՀՏ մագիստրատուրայի ֆակուլտետները ավարտածների ցուցանիշները վերլուծելիս, երբ ավարտածների թիվը ամեն տարվա համար չի անցել 204-ը՝ կրկին ունենալով ցածր մասնաբաժին ընդհանուր ավարտածների մեջ:

11. Հայաստանի սթարթափ էկոհամակարգը դեռևս երիտասարդ է, որտեղ գործող սթարթափների արժողությունը հիմնականում չի անցնում 100 միլիոն

ԱՄՆ դոլարը: Բացառություն են կազմում 4 սթարթափներ, որոնք այդ շեմը հաղթահարել են, սակայն կարող ենք փաստել, որ հայկական սթարթափների մեծ մասը գտնվում է իրենց կյանքի դեռևս վաղ փուլում: Այս առումով ճիշտ են դիրքավորված էկոհամակարգի սնուցողները՝ սթարթափ աքսելերատորներն ու ինկուբատորները, վենչուրային կապիտալի ֆոնդերը ու հրեշտակ ներդրողները, որոնք հիմնականում օգնում են կյանքի վաղ փուլում գտնվող սթարթափներին զարգանալ: Սակայն կյանքի հասուն փուլում գտնվող 4 սթարթափների զարգացման մասով էկոհամակարգը էական դերակատարում չունի, և նրանք հիմնականում օտարերկրյա կառույցների միջոցով են ապահովում իրենց աճը:

12. Տնտեսագիտական ու մաթեմատիկական մոդելավորման միջոցով բացահայտվել է, որ պետության կողմից սթարթափ էկոհամակարգը զարգացնելու համար իրականացվող երկու հնարավոր քաղաքականություններից (որոնցից մեկը խթանում է սթարթափների հիմնադրումը, իսկ մյուսը՝ սթարթափներում ներդրումների իրականացումը) առավել օպտիմալը սթարթափներում ներդրումների խթանումն է, որը ապահովում է սթարթափ էկոհամակարգի երկարաժամկետ կայուն զարգացումը և առավել թիրախավորված ու պակաս ծախսատար է:

Նշված եզրակացությունների հիման վրա առաջարկվել են Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացման մի շարք գործնական գործողությունների իրականացում, ինչը կխթանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մեծածավալ ներդրումների ներգրավումը: Այդ **առաջարկությունները** ներկայացված են ստորև.

1. Պետության կողմից ստեղծել վենչուրային կապիտալի ֆոնդ, որը մասնավոր վենչուրային կապիտալի ֆոնդերի հետ համատեղ ներդրումներ կիրականացնի Հայաստանի սթարթափ էկոհամակարգի սթարթափներում ու կսահմանի իր տնօրինման տակ հայտնված բաժնետոմսերի՝ որոշակի ժամանակահատվածում գնման հնարավորությունը համատեղ ներդրմանը մասնակցած մասնավոր վենչուրային կապիտալի ֆոնդի կողմից ներդրման պահին եղած գներով:

2. Ընդունել «Վենչուրային կապիտալի ֆոնդերի մասին» օրենք, որը կկանոնակարգի Հայաստանում գործող վենչուրային կապիտալի ֆոնդերի գործունեությունը, ինչպես նաև՝ կսահմանի պետության կողմից ստեղծվող վենչուրային կապիտալի ֆոնդի բյուջեն, գործունեության շրջանակը և մասնավոր վենչուրային կապիտալի ֆոնդերի հետ համատեղ իրականացվող ներդրումների ու պետության տնօրինման տակ հայտնված բաժնետոմսերի վաճառքի նախապայմանները:

3. Լրացում կատարել ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում որպես առանձին ենթակետ՝ սահմանելով անհատների կողմից հայկական սթարթափներում իրականացվող ներդրումների ծավալը որպես եկամտային

հարկի նվազեցում, որը կխթանի «հրեշտակ» ներդրողների կողմից սթարթափներում իրականացվող ներդրումները:

4. ՏՀՏ ոլորտի որակյալ մասնագետների ու ձեռնարկատերերի պատրաստման համար բացել մասնագիտացված դպրոցներ, որոնք իրենց ուսանողներին կուսուցանեն բացառապես ՏՀՏ ոլորտի մասնագիտություններ, որը կխթանի Հայաստանի սթարթափ էկոհամակարգ որակյալ աշխատուժի ու ձեռնարկատերերի մուտքը:

5. ՀՀ օրենսդրության մեջ իրավական կարգավորումներ տալ «ապագայում սեփական կապիտալի բաժնեմաս ստանալու համար պարզեցված պայմանագիր»-ների համար, որը կխթանի ինչպես արտասահմանյան այնպես էլ տեղական ներդրողներին ներդրումներ իրականացնել Հայաստանում գրանցված սթարթափներում:

6. Հայաստանի ֆոնդային բորսայում ներառել հայկական սթարթափները, որը հնարավորություն կտա ներդրողներին բորսայի միջոցով գնել այդ սթարթափների բաժնետոմսերը:

7. Իրականացնել «սթարթափ վիզա» ծրագիր, որով ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրների քաղաքացիների համար կհեշտացվի Հայաստան մուտք գործելը՝ Հայաստանում սթարթափ հիմնելու կամ հայկական սթարթափում աշխատանքի անցնելու նպատակով:

8. Երևանում գործող սթարթափների համեմատ ավելի բարենպաստ հարկային ու մաքսային արտոնություններ տրամադրել այն սթարթափներին, որոնք իրենց գործունեությունը կիրականացնեն Հայաստանի մարզերում՝ ոլորտում տարածքային համաչափ զարգացում ապահովելու նպատակով:

9. Իրականացնել «Սթարթափ Հայաստան» (անգլերեն՝ «Startup Armenia») ծրագիր, որի շրջանակներում Հայաստանի սթարթափ էկոհամակարգին վերաբերող հավաքագրված տեղեկատվությունը հասանելի պետք է դարձվի կայքէջի ու սոցիալական ցանցերի էջերի միջոցով՝ հայկական սթարթափները առաջխաղացնելու համար:

**Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.**

1. Խաչատրյան Վ., Թումանյան Վ., «Հայկական վիրտուալ կամուրջ» ծրագիրը Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացման համատեքստում // «Այլընտրանք» գիտական հանդես, №4, Երևան, 2021թ., էջեր 232-243:

2. Թումանյան Վ., Հայաստանում գործող սթարթափ աքսելերացիոն և ինկուբացիոն ծրագրերը Հայաստանի սթարթափ էկոհամակարգի զարգացման համատեքստում // «Այլընտրանք» գիտական հանդես, №4, Երևան, 2021թ., էջեր 265-279:

3. Թումանյան Վ., Հրեշտակ ներդրողների դերը հայկական սթարթափներում ներդրումների ներգրավման համատեքստում // «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու, 1(5), Երևան, 2021թ., էջեր 326-338:

4. Tumanyan V., Role of Unicorn Startups in Developing the Country's Startup Ecosystem // «Messenger of ASUE» Journal, 6(66), Yerevan, 2021, pp. 137-149.

5. Tumanyan V., The Role of Venture Capital Funds in the Context of Attracting Investments in Armenian Startups // «Public Management» Scientific Journal, №2, Yerevan, 2021, pp. 124-132.

6. Թումանյան Վ., Սթարթափ միջոցառումների դերը Հայաստանում սթարթափ էկոհամակարգի զարգացման մեջ // «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու, 1(6), Երևան, 2022թ., էջեր 236-246:

7. Khachatryan V., Tumanyan V., Analysis of international best practices for startup ecosystem development // «Region and the World» Scientific-Analytical Journal, Volume XII, № 3, Yerevan, 2022, pp. 174-178.

**ТУМАНЯН ВАГЕ ЛЕВОНОВИЧ**

# РАЗВИТИЕ «СТАРТАП-ЭКОСИСТЕМЫ» АРМЕНИИ, КАК СРЕДСТВО ДЛЯ ПРИВЛЕЧЕНИЯ ИНВЕСТИЦИЙ В СФЕРУ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика, управление хозяйством и его сферами».

Защита диссертации состоится 26-ого июля 2022 года, в $14^{00}$, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике при Российско-Армянском университете. Адрес: РА, 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123.

## РЕЗЮМЕ

Армения – страна с малой открытой экономикой, не наделенная большими запасами природных ресурсов. В этой связи, для развития экономики страны и создания продукции и услуг, конкурентоспособных на мировом рынке, ей необходимо сконцентрировать все свои усилия на новаторской мысли и идеях своих граждан. В этом контексте важную роль необходимо отводить стартапам которые находятся в поиске инновационных решений проблем экономики. Армения уже успела доказать, что у страны есть большой потенциал для создания на своей территории успешных стартапов, конкурентоспособных на мировом рынке. Именно поэтому особое значение для Армении имеет развитие стартап-экосистемы, посредством которой можно выстроить концепцию долгосрочного экономического развития экономики. Кроме того, в Армении практически отсутствуют научные исследования по представляемой к защите тематике, в силу того, что армянская стартап-экосистема еще молода, и большинство функционирующих в ней стартапов находятся на ранних стадиях своего жизненного цикла.

Целью исследования является выявление и совершенствование методов, способствующих развитию армянской стартап-экосистемы, что, в свою очередь, станет средством привлечения крупномасштабных инвестиций в сфере информационно-коммуникационных технологий в Армении. Для достижения указанной цели в исследовании были поставлены и решены следующие задачи.

1. Дать определение понятиям «стартап» и «стартап-экосистема» посредством исследования различных научных и практических материалов.

2. Изучить роль и значение различных субъектов, работающих в стартап-экосистеме на основе изучения международного опыта.

3. Выявить основные источники и способы привлечения инвестиций стартапами.

4. Проанализировать передовые международные практики развития стартап-экосистемы, изучив набор действий, которые способствовали этому развитию, и определить возможности для локализации этих практик в Армении.

5. Проанализировать факторы, влияющие на стартап-экосистему Армении и законодательную базу, регулирующую сектор, с целью выявления существующих возможностей и препятствий.

6. Оценить результаты и показатели стартап-экосистемы Армении с целью определения ее сильных и слабых сторон.

7. Оценить относительное влияние проводимой страной политик продвижения создания стартапов и инвестиций в стартапы на стартап-экосистему, для определения более эффективной политики и предложения на ее основе действий, обеспечивающих привлечение крупномасштабных инвестиций в сектор информационно-коммуникационных технологий в Армении.

**Научная новизна исследования.** Основные результаты диссертации имеют теоретическое, методологическое и практическое значение, научная новизна которых заключается в следующем:

1. На основе комплексного анализа законодательной базы, регулирующей сферу стартап-экосистемы Армении, были выявлены возможности и препятствия развития данной сферы, на основании чего были представлены предложения в области законодательных реформ, имеющих целью привлечения армянскими стартапами инвестиций местных и иностранных инвесторов.
2. Оценены результаты и показатели, достигнутые различными субъектами стартап-экосистемы Армении, на основании чего были выявлены сильные и слабые стороны экосистемы и обозначены подходы усиления сильных сторон и нейтрализации слабых.
3. Оценено влияние политик продвижения создания стартапов (спрос на венчурный капитал) и инвестиций в стартапы (предложение венчурного капитала) на модель рынка венчурного капитала Армении, в результате чего была определена наиболее оптимальная политика для долгосрочного развития стартап-экосистемы Армении и были осуществлены практические рекомендации по развитию экосистемы.
4. На основе изучения передового международного опыта были проанализированы действия, обеспечившие развитие стартап-экосистем в разных странах, на основании чего были предложены подходы к их локализации в контексте пакета мероприятий по развитию стартап-экосистемы Армении.

**TUMANYAN VAHE LEVON**

# ARMENIAN «STARTUP ECOSYSTEM» DEVELOPMENT AS A MEAN OF ATTRACTING INVESTMENT IN INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES SPHERE

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – «Economics, Management of the Economy and its Spheres».

The defense of the thesis will take place on the 26th of July, 2022, at 14$^{\underline{00}}$, at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian University: 123 H. Emin str., Yerevan, 0051.

## ABSTRACT

Armenia is a country with small open economy and is not rich in natural resources, so to develop the country's economy and create competitive products or services in the world market, it can mainly rely on the innovative thoughts and ideas of its citizens. In this context, startups play an important role, trying to provide innovative solutions to the problems in the economy. Armenia has already shown that it has a great potential to create successful startups in its territory, which are competitive in the world market. That is why the development of its startup ecosystem is of particular importance for Armenia, which can be a means of long-term economic development. Besides, there is almost no scientific research on the topic in Armenia as Armenian startup ecosystem is still young, and most of the startups operating there are in the early stages of their life.

The aim of the research is to identify and improve the methods that will help develop Armenian startup ecosystem, which in turn will be a means of attracting large-scale investments in the field of information and communication technologies in Armenia. To achieve this goal, the following objectives have been proposed and solved in the research.

1. Define the concepts of «startup» and «startup ecosystem» through research of various scientific and practical materials.
2. Study the role and significance of different entities operating in the startup ecosystem using data from international experience.
3. Identify the main sources and methods of attracting investment by startups.
4. Analyze the international best practices of startup ecosystem development by studying the set of actions that contributed to that development and identify opportunities for localization of those practices in Armenia.
5. Analyze the factors influencing Armenian startup ecosystem and the legislative framework regulating the sector to identify existing opportunities and obstacles.
6. Evaluate the results and indicators of Armenian startup ecosystem to identify its strengths and weaknesses.

7. Assess the relative impact of country-led startup creation and startup investment promotion policies on the startup ecosystem to identify the more efficient policy and based on that suggest actions that will ensure the attraction of large-scale investments in information and communication technologies sector in Armenia.

**Scientific novelty of the research.** The main results of the dissertation are of theoretical, methodological and practical significance, the scientific novelty of which is as follows:

1. Based on a comprehensive analysis of the legal framework regulating the sector of Armenian startup ecosystem, the opportunities and obstacles for the development of the sector were identified, on the basis of which legislative reform proposals were made for Armenian startups to attract investments from local and foreign investors.
2. The results and indicators recorded by different actors of Armenian startup ecosystem were evaluated, on the basis of which the strengths and weaknesses of the ecosystem were identified, outlining the approaches of reinforcing the strengths and neutralizing the weaknesses.
3. The impact of startup creation (venture capital demand) and startup investment (venture capital supply) promotion policies on Armenian venture capital market model was developed, as a result of which the more optimal policy for the long-term development of Armenian startup ecosystem was identified and practical proposals for the development of the ecosystem were made.
4. Based on the study of international best practices, the actions ensuring the development of startup ecosystems in different countries were analyzed, as a result of which package of actions to their localization for Armenian startup ecosystem development was proposed.